

## ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻՆ

Հայոց Գրերի Գյուղի 1600-ամյակի հանդիսությունների զիրա-գրեսական հանրապումարն էր ՀՀ Գիրությունների Ազգային Ակադեմիայում սեպտեմբերի 13-16-ը գեղի ունեցած զիրաժողովը:

Բացման խոսքով ներկաներին դիմեց ՀՀ Գիրությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեևը Սարգսյանը: Արժեվորելով Մաշտոցյան Գյուղը և այն դիմարկելով նաև աշխարհի այսօրվա մարդարավերների գետանկունից, Ազգային Ակադեմիայի նախագահը ի մասնավորի ասաց. «Այսօր մեր ժողովուրդը կրկին վայելում է պատմական բախտի բացառիկ մի շնորհ վերականգնվել է մեր ազգային պետականությունը: Հայոց լեզուն վերադրին հոգակվել է Հայաստանի Հանրապետության պետական լեզու: Հարցուր հազարավոր հայ մանուկներ ու պատանիներ իրենց մայրենի լեզվով և Մաշտոցյան 1600-ամյա գրերով են հաղորդակցվում աշխարհի մշակութային մեծարժեններին:»

Բայց XXI դարը բերում է նաև փոքր ազգերի հոգնոր ինքնությանը սպառնացող նոր վրանակներ: Մենք պետք են հավաքանք, սակայն, որ հայ ժողովուրդի հոգնոր պոկունությունը կրիմագրավի նաև այս նոր փորձությունները, քանի որ Մաշտոցյան գրերի նման զենք ունի իր ձևորին, գուանվեց դարերի հոգնոր մարտան դասեր ունի թիկունքում: Վաստա լինենք, որ մեր լեզուն և զիրը Մայր Հայրենիքի և սիյուռքահայության հոգնոր միասնության համար հաստատահինն կլուած կլինի նաև ապագայում, ինչպես եղալ է հազար վեց հարյուր դարի»:

Գիրաժողովի մասնակիցներին ողջունի իր խոսքն էր հեղեղ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, խոսք, որն ընթերցեց նախագահի օգնական Վիգեն Սարգսյանը, որպես ասվում է. «Ողջունում եմ Հայոց Գրերի Գյուղի 1600-ամյակին և միհրանակած միջազգային զիրաժողովը, նրա կազմակերպիչներին և մասնակիցներին:»

Հայ Գրերի Գյուղով մեր ժողովուրդը թևակոյինց մշակութային, զիրական ու քաղաքակրթական նոր ժամանակաշրջան: Այդ առաջընթացը հնարավոր եղալ երկրի մարդականության, հոգնորականության և բարձրագույն պետական իշխանության միահամուռ ցանքերի շնորհիվ:

Մասնարված հայության բոլոր հարվածները Գրերի Գյուղի շնորհիվ միավորվեցին հայություն դպրոցների լայն ու միասնական ցանցով, ձևավորվեց միասնական ազգային ինքնազիրակցություն, ինչը վճռորոշ դեր խաղաց երկրի ու ազգի հետագա ճակարտագրում:

Մաշտոցյան Գրերի Գյուղը հայոց պատմության այնպիսի ռնդղելուն և նշանակալի դրվագ է, որ զիրականների յուրաքանչյուր սերունդ այն նորովի ընկալելու և վերականագրավորելու կարիք ունի: Ներկա զիրաժողովը մենք դիմարկ կերպում ենք այս համարեքսպում և հաջողություններ մաղթում նրա մասնակիցներին:

Այսուհետև Արարավյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ Եպիսկոպոս Կճոյանը ընթերցեց Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինության խոսքը ( փես էջ 16):

Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսության Միջեղենական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Նարեկ Եպիսկոպոս Ալիմնզյանը ընթերցեց Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Առաջինի օրինության խոսքը, որում ասվում է. «1600 տարիներ շարունակ մեր ինքնութեան աղքահրը, մեր միութեան շաղահը, մեր գոյապայքարին առանցքը դարձած Մեսրոպիան ԱՔԳ-ը առանձ քանի երբեք մեզի համար կը մնայ այսօր ու միշտ մեր հօրութեան, մեր միասնականութեան ու մեր յաւերժութեան ամենաէն ապահով ճամբար:»

«Եռու հայ լեզուն՝ հայ ընդունիքը պիտի կորսնցնէ «կիոքր Հայաստան» դառնալու իր առաքելութիւնը: Եռու հայ լեզուն՝ հայ դպրոցը պիտի կորսնցնէ իր գոյութեան պատճառը: Եռու հայ լեզուն՝ հայու ինքնութիւնը պիտի գունաթափի մշակոյթ ու ինքնութիւն քանդող համաշխարհայնացումի հուսանքներուն դիմաց:»

Արդ, Մեսրոպաստեղ հայ լեզուին առողջ պահպանումը, անոր ճիշդ ու հարցարար գործածումը, յարկապէս մեր նոր սերունդին կողմէն ու տակապին՝ լեզուարանութեան, քերականագիրութեան, բանահիմանութեան, գրականագիրութեան և հայագիրութեան այլ բնագասատներէն ներս հայ լեզուի զանազան ծալքերուն, երևոյթներուն ու խնդիրներուն լուրջ ուսումնասիրութիւնը Մենք կը նկարենք առաջնահերթութիւն: Այս ծիրէն ներս Հայաստանի պետութիւնը իր կարևոր դերը ունի կարարելիք: Պետութեան կողքին՝ մեր Եկեղեցին, Հայաստանէն ներս թէ դուրս, կողուած է աւելի աշխատութեամբ յատաշ դրանի հայ լեզուի դարածնան աշխարհանք՝ վերականգնելով ու վերակազմակերպելով կրթական ու մշակութային իր պարմական առաքելութիւնը: Մեր մշակուրականները, բանասէրները, հայագերները, ուսուցիչները ու հոգևորականները, իրաքանչիրը իր մօրեցումով ու շեշտառումով, կենսական դեր ունի կարարելիք այս ուղղութեամբ:

Արդ, 1600-ամենակի նշումը սուսկ յորեկեանական հանդիսութեան պէտք չէ վերածու: Ան պէտք է դառնայ հայ լեզուի նկատմամբ մեր ունեցած նախանձախնդրութեան շօշափելի արդարայդութիւն դրալու մարդուարաւաէր: Ան պէտք է դառնայ Մեսրոպական ուղղագրութեան, արեւելահայ ու արեւնցահայ լեզուներու գործածութեան ու ընդհանրապէս հայ լեզուին առնչուած խնդիրներու լուրջ ու համապարփակ ուսումնասիրութեան սքանչելի առիթ մը: Մեր սպասումն է, որ ներկայ գիրածողով այս հայեցակէնով ու հեռանկարով կազմակերպէ ու կարարէ իր աշխարհանքները»:

Լիազումար նիստում ընթերցվեցին Մաշտոցյան Մարենադարանի վճորեն, ակադեմիկոս Մեն Արևշավյանի «Մեսրոպ Մաշտոցի հոգևոր սիրանքը», ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի փոխնախագահ Վազիկմիք Բարխուդարյանի «Գրերի Գյուլը և հայ ինքնությունը», Միջիամնի համալսարանի պլոտեսոր Գևորգ Բարդալյանի «Տառ, խոսք և միքը. համառոր ակնարկ հայոց լեզվի և հայ մրգի ու մշակույթի փոխանոնչությունների մասին», ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիրքը, բա-

նասիրական գիտությունների դրկուլոր Ազար Եղիազարյանի «Մեսրոպ Մաշտոցի կերպարը հայ ժողովրդի գիտակցության և հայ գրականության մեջ» թեմաներով գեկուցումները:

Գիտաժողովն այնուհետև շարունակվեց իրար գուգահեռ ընթացող երեք բաժանմունքներում:

Առաջին՝ «Հայոց Գրերի Գյուղը և նրա պարմական նշանակությունը» խորագրված բաժանմունքում կարդացված գեկուցումները նվիրված էին Մաշտոցյան շրջանի հայերենի հնչյունական համակարգին (Զ. Բոլոնյեղի՝ Խփալիա, Գ. Վարդյան), Դպրության Տիր ասդարձության հին պաշտամունքի ազդեցությունը Մաշտոցի գրական կերպարի ձևավորման վրա (Աշ. Պետրոսյան), Մաշտոցի գործունեության մշակութարանական հենքին (Շ. Հակոբյան), Նախամաշտոցյան հայ գրերի հարցին (Ա. Մուշեղյան, Ռ. Հակոբյան, Ս. Նմայակյան), Մաշտոցի կողմից գրերի Բալուում սփեղծված լինելու ավանդությանը (Ան. Պետրոսյան), Հայոց գրերի անվանումների ծագմանը (Ս. Մուրավյով՝ Ֆրանսիա, Ռուսաստան), Մաշտոց անվան սփրուգաբանությանը (Տ. Դավայան), Մաշտոցագիտական ուսումնասիրություններին (Ա. Սահակյան), հայոց գրերի, որպես ինքնապահպանության գործոնի (Վ. Վարդանյան), Մաշտոցյան գրերի մասին ֆրանսիացի և ոռու հայագեղիների հայփնած կարծիքներին (Ա. Դոլուխանյան, Ա. Փաշայան), հայոց դպրության միջազգային նշանակությանը (Վ. Տրուբնիկով՝ Ռուսաստան), Հայոց գրերի, որպես ազգային ինքնության գործոնի (Վլր. Սփեփանյան, Մ. Կարությունյան, Ա. Էլիզաբեթ Ռենդելյան՝ Մեծ Բրիտանիա, Ս. Զարարյան, Ռ. Միրումյան, Ռ. Տեր-Մերկերյան՝ Ֆրանսիա, Վ. Պողոսյան), հայագրաքորերեն գրականությանը (Տ. Սփեփանյան), հայապահպանության արդի խնդիրներին (Լ. Եղիազարյան) թեմաներին:

Երկրորդ՝ «Հայոց Գրերի Գյուղը և հայոց մշակույթը» բաժանմունքում կարդացված գեկուցումները նվիրված էին առաջին հայագիր հենինակներին (Կ. Յուզբաշյան՝ Լենինգրադ), 5-րդ դարի հայ մատենագրության հրապարակախոսական շերտին (Գ. Անանյան), Հայոց գրի զարդագրային ու մանրանկարչական արդահայտություններին (Դրվ. Հակոբյան), Հայկական պատկերաբանակներում առկա ուսումնառության թեմային (Ռ. Պետրոսյան), Հայոց լեզվադարձականությանը (Տ. Զարարյան), «Երևան» գեղանվան ուղղագրությանը (Տովի. Բարսեղյան), Հին հայերենի հենելվողական ծագման հոմանիշ բայերին (Ն. Սիմոնյան), Հարուկ անուններով կազմված բարբառային ածականական հոմանիշներին (Շ. Մեսրոպյան), 5-րդ դարի հայ մատենագրությունում և հայերենի բարբառներում առկա երկրագործական բառերին (Ա. Արքահամյան), Հայոց հին ամսանուններին (Վ. Բառնասյան), Հայերենի ծայնավորների շարքում Ը-ի գրաված դիրքին (Բ. Գուլակյան՝ Ռուսաստան), Հայկական համակարգչային գառափակությանը (Ա. Ղարուզյան), Հայկական գաղափարագրերի (նշանագրերի) համակարգչային համահավաք ծրագրին (Գ. Վահանյան), Կորյունի «Վարք Մաշտոցի»-ին (Ա. Տերյան՝ ԱՄՆ), Գրիգոր Նարեկացու Խաչի ներողույանի ակրոստիկոսին (Վ. Միրզոյան), Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» սփեղծագործությանը (Մ. Վ. Վան Լինփ), Հայագիր օվարալեզու գրականությանը (Տ. Չորբանյան), Օսմանյան կայությունում հայերի լեզվական իրավունքների ուժահարմանը (Վ. Սվավյան), Կոմմազենի գրավոր-մշակութային ակունքներին (Լ. Ասրյան), Հայկական և վրացական Այրուբեն-

ների սպեղծման սկզբունքներին (Ա. Բարայան), Հայոց ասեղնագործության հյուսածո արձանագրություններին (Կ. Բագեյան) թեմաներին:

Երրորդ՝ «Հայոց գրերի գյուղը և Հայոց Եկեղեցին» բաժանմունքում կարդացված զեկուցումները նվիրված էին Մեսրոպ Մաշտոցի զինվորական ծառայությունից մինչև հոգևոր ծառայությունը ընդգրկող գործունեությանը (Մեսրոպ արքեպոս. Գրիգորյան՝ Վիեննա), Մաշտոցի հյուսախային երկրորդ ուղևորության ժամանակին և խնդիրներին (Ա. Հակոբյան), Աղանդավորության նկարնամբ Մաշտոցի վերաբերմունքին (Ա. Նարությունյան, Վ. Բալայան՝ Արցախ), Հայոց Եկեղեցու որպես էթնոմշակութային խորհրդանշանի (Դ. Նարոյան), Հայոց նկեղեցական պատմագրության սկզբնավորմանը (Ա. Բողոյան), Գրերի Գյուղը Օրմանյանի գնահատությամբ (Է. Կոստանյան), Հայկական և հին ուսական գրերի սպեռծման գործում հունական մշակույթի ազդեցությանը (Օ. Կարիկով՝ Ռուսաստան), Ավելարանի մաշտոցյան թարգմանության բնագրի վերականգնմանը (Կ. Բուշիառզեն՝ Ավստրիա), Ազգային հիմներգործյան ձևավորմանը (Ա. Արևշադյան, Մ. Նավոյան), Սրբոց Թարգմանչաց նկեղեցական կանոնի և տոնի ձևավորմանը (Վ. Արքիլյան), «Շարակնոցի» թարգմանչաց կանոնին (Վ. Ներսիսյան), Գրերի Գյուղի մասին «Գիրք պատճառացի» վկայություններին (Է. Շիրինյան), Ա. Գրիգոր Լուսավորչի ծագումնաբանությանը (Մ. Եվլոյյան՝ Ֆրանսիա), Հոփիսիմյանց վկայաբանությանը (Ք. Տեր-Դավթյան), Հայ-բյուզանդական միջնադարյան բանավեճերում եիշվող հայալեզու գերմիններին (Ք. Հաննիկ՝ Գերմանիա), «Առակաց գրքի» միջնադարյան մելկոնթյուններին (Ա. Գրիգորյան), «Ալոմիկ» և «Սպոտէք» բառերը Մաշտոցին վերաբերվող սկզբնադյուրներում (Օ. Վարդագարյան), Հայոց գրային համակարգի վաղ միջնադարյան բնագիրական բացակրություններին (Գ. Պողոսյան), Գրի և գրի հերթ կապված հայոց ծեսերին (Դ. Պիշիլյան), Հայոց Գրերի Գյուղին երածշաղագեսական խնդիրների համարեսարում դիմարկմանը (Դ. Ռ. Սպեհիանյան) թեմաներին:

Այս զիտաժողովը եկավ ոչ միայն ևս մեկ անգամ հավասդելու Մաշտոցյան գյուղի հայ ժողովրդի կյանքում խաղացած բացառիկ դերը, որպես հայոց աշխարհի երկրորդ լուսավորության քրիստոնեության ընդունումից հետո, այլև վեր հանելու և մատնանշելու զիտափեսական այն հիմնախնդիրները, որոնք կան հիմնվերորդ դարի հայ դասական պատմագրության, Հայոց Այբուբենի և ընդհանրապես հայոց գրային համակարգի և վերջինիս անցած պատմական զարգացման բնագավառում:

**ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ**